Ավագ հատուկ ուսուցչի մասնագիտական ունակությունների թեստ

Հրահանգ

Ձեր առջև է թեստի էլեկտրոնային բուկլետը:

Թեստը ներառում է երեք տեսակի՝ ընտրովի պատասխաններով, համապատասխանության և բաց առաջադրանքներ (ընդհանուր առմամբ՝ 40 առաջադրանք):
Թեստի առավելագույն միավորն է՝ 54:

Յուրաքանչյուր տեսակի առաջադրանքների բլոկին նախորդում է հրահանգ: Ուշադիր կարդացեք դրանցից յուրաքանչյուրը, լավ ըմբռնեք, թե ինչ է պահանջվում առաջադրանքը կատարելու համար, որից հետո միայն ընտրեք կամ գրեք պատասխանը:

Թեստի վրա աշխատելու համար տրվում է 4 ժամ:

Մաղթում ենք հաջողություն:

Հաջորդ էջին անցնելու և ետ վերադառնալու համար կարող եք գործածել ստեղնաշարի հետևյալ կոճակները՝

* Որոշ առաջադրանքներ չեն տեղավորվում մեկ էջի վրա: Նման դեպքում երկրորդ էջը գտնելու համար առաջադրանքի համարին ավելանում է լատինական - a տառը:

Հրահանգ

Ընտրովի պատասխաններով առաջադրանքներին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Առաջադրանքի էությունն ավելի լավ ըմբռնելու համար ուշադրություն դարձրեք հարցի ընդգծված, թավատառ արտահայտություններին:

Ընտրովի պատասխաններով առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 1

* Առաջադրանքի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Աուտիզմի սպեկտրի խանգարում ունեցող աշակերտը դժվարանում է ճանաչել և արտահայտել հույզերը, ինչից ելնելով խնդիրների է բախվում դասարանի աշակերտների հետ շփվելիս: Հատուկ ուսուցիչը նպատակ դրեց աշխատել հատուկ կրթական կարիքներ ունեցող (ՀԿԿՈ) այս աշակերտի հուզական կարողունակության (կոմպետենտություն) զարգացման վրա:

Թվարկվածներից ուսուցչի ո՞ր ակտիվությունն **ամենից շատ** կնպաստի ՀԿԿՈ աշակերտի հուզական կարողունակության (կոմպետենտություն) զարգացմանը:

ա) Ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտին ցույց է տալիս քարտեր, անվանում է դրանց վրա պատկերված հույզերը, որից հետո խնդրում է նրան իր հետ միասին կրկնել յուրաքանչյուր հույզի անվանումը:

ծ) Ուսուցիչը խնդրում է ՀԿԿՈ աշակերտին համադասարանցիների հետ բեմականացնել սոցիալական իրավիճակներ, որի ընթացքում երեխաներն արտահայտում և կռահում են տարբեր հույզեր:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

գ) Ուսուցիչը ՀԿԿՈՒ աշակերտին ցույց է տալիս հույզեր պատկերող քարտեր՝ միաժամանակ խնդրելով նրան կռահել և ընտրել այն քարտը, որն արտահայտում է նրա կողմից անվանված հույզը:

դ) Ուսուցիչը դասարանի աշակերտներին ցույց է տալիս սյուժետային քարտեր, ՀԿԿՈՒ աշակերտը և նրա համադասարանցիները պետք է անվանեն այն հույզը, որը կարող է ունենալ այդ քարտի վրա պատկերված կերպարը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 2

Հատուկ ուսուցչի պորտֆոլիոն կարևոր գործառույթ է կատարում ներառական կրթության գործընթացում:

Թվարկվածներից ո՞ր պնդումն է **բոլորից ճշգրիտ** նկարագրում ուսուցչի պորտֆոլիոյի գործառույթը:

ա) Պորտֆոլիոն վարչական փաստաթուղթ է, որտեղ արձանագրվում են ՀԿԿՈ աշակերտի հաճախելիությունը, գնահատականները և անցկացված անհատական դասերի քանակը:

բ) Պորտֆոլիոն ներկայացնում է ուսուցչի դասավանդման մեթոդների արդյունավետությունը, գիտելիքները, նվաճումները և հմտությունները, թե որքանով են դրանք համապատասխանում ՀԿԿՈ աշակերտի կարիքներին դպրոցական միջավայրում:

գ) Պորտֆոլիոն Անհատական ուսումնական պլանի հավելյալ փաստաթուղթն է, թղթապանակը, որտեղ կուտակվում են ՀԿԿՈ աշակերտի կողմից ուսումնական տարվա ընթացքում կատարված աշխատանքները և մոնիթորինգի արդյունքները:

դ) Պորտֆոլիոն ուսուցչի պատրաստած տարեկան հաշվետվությունն է, որտեղ ներկայացված է աշակերտի ակադեմիական առաջադիմության դինամիկան և որը դիտարկվում է Անհատական ուսումնական պլանի խմբի ամփոփիչ հանդիպումների ընթացքում:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 3

Հատուկ ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտի հետ անհատական աշխատանքի ընթացքում բացահայտել է, որ աշակերտը դժվար է ըմբռնում հրահանգները:

Թվարկվածներից հատուկ ուսուցչի ո՞ր գործողությունը/գործողությունները կօգնի/կօգնեն աշակերտին խնդիրը հաղթահարելու հարցում:

I. Ուսուցիչն առաջադրանքը բաժանում է մասերի և նախքան դրանցից յուրաքանչյուրի կատարելն օգտագործում է տեսողական հրահանգներ:

II. Ուսուցիչը հրահանգները ներկայացնելուց առաջ աշակերտին զգուշացնում է, որ ուշադիր լսի, որից հետո տրամադրում է նրան վերբալ (բանավոր) հրահանգ:

III. Ուսուցիչը դասարանի աշակերտների համար ընթերցում է հրահանգը և դիմելով ՀԿԿՈ աշակերտին ասում է, որ անհրաժեշտության դեպքում նա կարող է հղել հարցեր:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 4

ՀԿԿՈ աշակերտը դրսևորում է խնդրահարույց վարք. երբ ուսուցիչը մյուս երեխաներին հարցեր է տալիս, իսկ նրան ուշադրություն չի դարձնում, նա արտասվում է: Աշակերտի վարքը կարգավորելու նպատակով ուսուցիչը պահանջում է նշանակել նրա համար անձնական օգնական:

Ուսուցչի պահաջը.

ա) **ճիշտ է.** վարքային խնդիր ունեցող յուրաքանչյուր ՀԿԿՈ աշակերտին անհրաժեշտ է օգնական, քանի որ ուսուցիչը դասի ժամանակ կդժվարանա հավելյալ ժամանակ տրամադրել նշված կարիքն ունեցող աշակերտի ուսմանը սատարելու համար:

բ) **ճիշտ չէ.** ՀԿԿՈ աշակերտը կկապվի իր համար նշանակված օգնականի հետ, ինչից ելնելով էլ կդժվարանա ինքնուրույն մասնակցել դասապրոցեսին:

գ) **ճիշտ է.** առանց օգնականի աջակցության վարքային խնդիրներ ունեցող ՀԿԿՈ աշակերտը կդժվարանա ինքնակարգավորվել, ինչն ապագայում բացասականորեն կանդրադառնա նրա ակադեմիական առաջադիմության վրա:

դ) **ճիշտ չէ**. ՀԿԿՈ աշակերտը չունի առանձնահատուկ հոգատարության ակնհայտ կարիք, այդ իսկ պատճառով կիրառելով տարբեր ռազմավարություններ ուսուցիչն ինքը պետք է կառավարի աշակերտի վարքը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 5

ՀԿԿՈ աշակերտն ունի սենսորային (զգայական) ինտեգրման խանգարում:

Թվարկվածներից ի՞նչ տեսակի խնդիր/խնդիրներ կարող է/են ստեղծվել աշակերտի համար դասարանում:

I. Զգայական խանգարման պատճառով աշակերտը կարող է դժվարանալ կարդալ, քանի որ ամենայն հավանականությամբ, նա կունենա տառաչափը մեծացնելու կարիք:

II. Աշակերտը ինտենսիվ գրգիռներ փնտրելու նպատակով դասի ընթացքում կարող է դրսևորել հիպերակտիվ վարք:

III. Աշակերտը տարբեր գրգիռների վրա սուր արձագանքելու պատճառով կարող է հեշտությամբ հոգնել, նյարդայնանալ և չկարողանալ կենտրոնանալ:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 6

Հատուկ կրթական կարիքներ ունեցող (ՀԿԿՈւ) աշակերտը գրատախտակից հեշտությամբ է արտագրում առանձին բառեր, սակայն դժվարությամբ է արտագրում նախադասությունները:

Թվարկվածներից ո՞րն է այն կարճաժամկետ նպատակը, որը մշակված է աշակերտի կարողությունների և կարիքների նախատեսմամբ:

ա) ՀԿԿՈւ աշակերտը պետք է կարողանա ներկել ուսուցչի կողմից գրատախտակի վրա գրված նախադասությունների համապատասխան նկարները:

բ) ՀԿԿՈւ աշակերտը պետք է կարողանա դուրս գրել նախադասության մեջ գործածված բառերը՝ ըստ տետրում ներկայացված նմուշի:

գ) ՀԿԿՈւ աշակերտը տետրի մեջ պետք է կարողանա արտագրել ուսուցչի կողմից գրքում նշված երկբառ նախադասությունները:

դ) ՀԿԿՈւ աշակերտը տետրի մեջ պետք է կարողանա թելադրությամբ գրել ուսուցչի կողմից գրված նախադասությունները:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 7

ՀԿԿՈ աշակերտն ունի լսողության ծանր խանգարում և դպրոց է հաճախում հաճախելիության անհատական ժամանակացույցով: Ուսուցիչը դասարանում քննարկում է անցկացնում միայն այն ժամանակ, երբ ՀԿԿՈ աշակերտը բացակայում է դասից:

Ուսուցչի մոտեցումը աշակերտի զարգացման տեսանկյունից.

ա) **ճիշտ է.** ուսուցիչը քննարկում պետք է անցկացնի միայն այն ժամանակ, երբ լսողության խանգարում ունեցող աշակերտը դասարանում ներկա չի գտնվում, քանի որ նա կդժվարանա արդյունավետորեն ընդգրկվել այս ակտիվությանը, կընկճվի և իրեն կզգա վտարված:

բ) **ճիշտ չէ.** ուսուցիչն անպայման պետք է ընդգրկի քննարկմանը լսողության խանգարում ունեցող աշակերտին, որպեսզի նա ընտելանա բանավոր տեղեկատվության արագ ընկալմանը և որքան ավելի հաճախ մասնակցի քննարկմանը, այնքան ավելի լավ արդյունք կունենա:

գ) **ճիշտ է,** քանի որ լսողության խանգարում ունեցող աշակերտը քննարկման ժամանակ չի հասկանա համադասարանցիների ասածը, ինչը կխոչընդոտի քննարկման ընթացքին և կխանգարի նաև մյուս աշակերտներին:

դ) **ճիշտ չէ,** քանի որ որքան ավելի հաճախ ներգրավվի լսողության խանգարում ունեցող աշակերտն իր կարիքներին հարմարեցված պայմաններով քննարկմանը, այնքան ավելի կբարելավվեն նրա սոցիալական հմտությունները:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 8

Ուսուցիչը խոշոր շարժողական հմտությունները զարգացնող ակտիվությունների համար անհրաժեշտ ռեսուրս է ընտրել:

Լուսանկարներում ներկայացված ո՞ր ռեսուրսի կիրառմամբ կօգնի ուսուցիչն աշակերտին խոշոր շարժողական հմտությունները զարգացնելու գործում:

ա)

բ)

գ)

դ)

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 9

Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտի կարգավիճակ շնորհելու վերաբերյալ արտահայտված ո՞ր պնդումն/պնդումներն է/են ճիշտ:

I. Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտի կարգավիճակ շնորհելու համար անհրաժեշտ է, որպեսզի աշակերտն ունենա այնպիսի բժշկական ախտորոշում, որը բացասաբար է ազդում նրա առողջական վիճակի վրա և պայմանավորում է ուսման մեջ արտահայտված դժվարություններ:

II. Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտի կարգավիճակ շնորհելու համար անհրաժեշտ է, որպեսզի աշակերտն ունենա մտավոր զարգացման խանգարում և դրան ուղեկցող վիճակներից որևէ մեկը, որի պատճառով ստեղծվում են սովորելու հետ կապված դժվարություններ:

III. Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտի կարգավիճակ շնորհելու համար անհրաժեշտ է, որպեսզի աշակերտն ունենա ուսման և/կամ ուսումնական միջավայրի մատչելիության հետ կապված զգալի դժվարություններ և սովորելու ընթացքում նրան պահանջվի հավելյալ աջակցության:

ա) Միայն I և II, բ) Միայն I և III, գ) Միայն II, դ) Միայն III:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 10

ADHD համախտանիշ ունեցող ՀԿԿՈ աշակերտը դժվարանում է երկարատև կենտրոնացնել ուշադրությունը մի ակտիվության վրա, ինչից ելնելով նրա համար պետք է հարմարեցնել (ակոմոդացիա) Ազգային ուսումնական պլանը (ԱՈՒՊ):

Թվարկվածներից ո՞րն է ՀԿԿՈ աշակերտի համար ԱՈՒՊ-ի ակոմոդացիան:

ա) Ուսուցիչը կրճատել է ԱՈՒՊ-ի ուսումնական նպատակները և ուսուցման գործընթացում սկսել է օգտագործել ավելի շատ զննական պարագաներ:

բ) Ուսուցիչն ուսումնական արդյունքներն ընտրել է նախորդ աստիճանից և ուսուցման գործընթացում աշակերտին առաջարկել է պարզեցված առաջադրանքներ:

գ) Ուսուցիչը ԱՈՒՊ-ով սահմանված նպատակներն անփոփոխ է թողել և աշակերտի համար ակտիվությունները մասերի է բաժանել այնպես, որ յուրաքանչյուրի համար քիչ ժամանակ պահանջվի:

դ) Ուսուցիչը պարզեցրել է ուսումնական նպատակները և կրճատել աշակերտի համար նախատեսված առաջադրանքների քանակը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 11

ՀԿԿՈ աշակերտը որոշ դասերին ներկա է գտնվում իր համադասարանցիների հետ միասին, իսկ երբեմն անհատական կերպով աշխատում է ռեսուրս սենյակում:

Նկարագրված մոտեցումը ներառական կրթության սկզբունքներին.

ա) **համապատասխանում է,** քանի որ ՀԿԿՈ աշակերտին ռեսուրս սենյակ տեղափոխելով համադասարանցիներին ուսումը հանգիստ շարունակելու հնարավորություն է տրվում:

բ) **չի համապատասխանում,** քանի որ ներառական կրթությունը ենթադրում է աշակերտների համատեղ ուսուցում, իսկ ՀԿԿՈ աշակերտին դասից դուրս բերելը կնպաստի նրա նկատմամբ խտրականության:

գ) **համապատասխանում է,** քանի որ ուսուցման գործընթացում պետք է նախատեսվի նաև ՀԿԿՈ աշակերտի կարիքներին հարմարեցված անհատական աշխատանքը:

դ) **չի համապատասխանում,** քանի որ ՀԿԿՈ աշակերտի ոչ սիստեմատիկ հաճախելիությունը դասերին կխանգարի նրա ինչպես ճանաչողական, այնպես էլ սոցիալ-հուզական հմտությունների զարգացմանը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 12

Թվարկվածներից աշակերտի ո՞ր ոչ ցանկալի վարքագիծն/վարքագծերն է/են պահանջում ճգնաժամային միջամտություն (ինտերվենցիա):

I. Երբ աշակերտը սիստեմատիկ կերպով ուշանում է դասերից և չի կատարում տնային առաջադրանքները:

II. Երբ աշակերտը դրսևորում է այնպիսի վարք, որը վտանգի տակ է դնում նրա և/կամ այլ մարդկանց անվտանգությունը:

III. Երբ աշակերտը աղմկում է և դրանով խանգարում և՛ համադասարանցիներին, և՛ ուսուցչին՝ դասը հանգիստ անցկացնելու հարցում:

ա) Միայն I, բ) Միայն I և III, գ) Միայն II, դ) Միայն II և III:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 13

Դասապրոցեսին լսողության խանգարում ունեցող ՀԿԿՈ աշակերտի համար ուսուցչի կողմից կիրառված ակոմոդացիայի օրինակն/օրինակներն է/են.

I. Ուսուցիչը վերահսկում է դասարանում լուսավորության և աղմուկի մակարդակը՝ ըստ աշակերտի կարիքների:

II. Ուսուցիչը կիրառում է ենթագրեր (սուբտիտրներ) դասը բացատրելու և աշակերտներին հրահանգները ներկայացնելու ժամանակ:

III. Ուսուցիչը բարդ տեքստը փոփոխում է աշակերտի կարողություններին հարմարեցված ավելի պարզ և տարբերվող բովանդակությամբ տեքստով:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 14

ՀԿԿՈ աշակերտը սպորտի դասին դժվարությամբ է հասկանում խաղի կանոնները և հաճախ խախտում է դրանք: Դրանից ելնելով համադասարանցիները հրաժարվում են խաղալ մի թիմում:

Թվարկվածներից ո՞ր ակտիվությամբ կկարողանա ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտին արդյունավետորեն ընդգրկել դասապրոցեսին:

ա) Ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտի համար ընտրում է մրցավարի դերը և խնդրում նրան ուշադիր հետևել թիմի խաղին:

բ) Ուսուցիչը թիմային խաղի ժամանակ ՀԿԿՈ աշակերտին խնդրում է երկրպագել մեկ մի թիմին, մեկ՝ մյուսին:

գ) Ուսուցիչը խնդրում է համադասարանցիներին կարեկցանքով վերաբերվել ՀԿԿՈ աշակերտի կողմից խաղի կանոնների խախտմանը:

դ) Ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտին խաղի կանոնները բացատրելիս օգտագործում է տեսողական նշաններ:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 15

ՀԿԿՈ աշակերտը դժվարանում է մշակել և հետևաբար նաև արձագանքել զգայական տարբեր մոդալություններով ստացած տեղեկատվությանը:

Թվարկվածներից խանգարման ո՞ր ձևն է նկարագրված տվյալ դեպքում:

ա) Աշակերտն ունի ֆունկցիոնալ ունակությունների զարգացման դժվարություն:

բ) Աշակերտն ունի վարքի և հույզերի կարգավորման դժվարություն:

գ) Աշակերտն ունի սենսորային ինտեգրման խանգարում:

դ) Աշակերտն ունի հնչույթաբանական ունակության խանգարում:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Հրահանգ

Համապատասխանության առաջադրանքները ներկայացված են աղյուսակի տեսքով: Աղյուսակը բաղկացած է երկու սյունակից: Սյունակներից մեկում տրված է պայմանը, մյուսում՝ ենթադրական պատասխանները: Սյունակներում տրված տեղեկությունները համապատասխանեցնեք իրար և պատասխանը գրեք կից ներկայացված աղյուսակում: Անպայման կարդացեք պատասխանի բոլոր տարբերակները: Հաշվի առեք, որ դրանցից որևէ մեկը կարող է համապատասխանել երկու պայմանի, կամ չհամապատասխանել ոչ մեկի:

Համապատասխանության առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 16

Բ սյունակում ներկայացված են ունակությունները, իսկ Ա սյունակում այդ ունակությունների զարգացման համար մշակված նպատակները: Համապատասխանեցրեք դրանք իրար:

Նպատակ (Ա)	Ունակություն (Բ)
I. Աշակերտը պետք է կարողանա խմբավորել օբյեկտները՝ հաշվի առնելով միաժամանակ երկու հատկանիշները:	՝) Մտածողություն
II. Աշակերտը պետք է կարողանա փոխանցել, պատմել սյուժետային քարտերի վրա պատկերված պատմությունը:	ճ) Էքսպրեսիվ խոսք
III. Աշակերտը պետք է կարողանա ճիշտ հաջորդականությամբ դասավորել կենցաղային երևույթների հետ կապված երեք-չորս սյուժետային քարտերը:	

** Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:*

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 17

A սյունակում նկարագրված են ուսուցչի գործողությունները, իսկ B սյունակում՝ օգնության ձևերը: Համապատասխանեցրեք դրանք իրար:

Գործողություն (A)	Օգնության ձևը (B)
I. Հատուկ ուսուցիչը թվանշանները դասավորում է աճման կարգով, այնուհետև խնդրում է աշակերտին կրկնել նույնը:	ՀՀ) Մոդելավորում
II. Հատուկ ուսուցիչը դիմում է աշակերտին. «Դու արդեն միացրել ես երկու գիծը, քեզ ընդամենը մի քայլ է մնում, որպեսզի ստացվի եռանկյուն»:	ԾԾ) Հուշում
III. Հատուկ ուսուցիչը կոշկաքուղերը կապելու գործողությունը սովորեցնելիս աշակերտին տրամադրում է քարտ, որի վրա աշակերտը պետք է կռահի հաջորդ գործողությունը:	

** Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:*

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 18

A սյունակում ներկայացված են աշակերտի խոսքի առանձնահատկությունները պատկերող օրինակներ, իսկ B սյունակում՝ լեզվի և խոսքի զարգացման խանգարման տեսակները: Համապատասխանեցրեք դրանք իրար:

Օրինակ (A)	Խանգարման տեսակը (B)
I. Աշակերտն արտաբերում է անհասկանալի հնչյուններ և լսողը, որպես կանոն, չի հասկանում նրա ասածը:	ա) Ֆոնոլոգիական ծ) Արտիկուլյացիոն
II. Աշակերտը չի կարողանում արտաբերել որոշ հնչյուններ և բառերի մեջ դրանք միշտ մեկ այլ հնչյունով է փոխարինում:	
III. «Տետր» բառի փոխարեն աշակերտն ասում է «տետլ», թեև ճիշտ է արտաբերում «քարտեզ» բառը:	

** Համապատասխանությունները գրեք պատասխանների թերթիկի վրա տրված աղյուսակում: Գրեք պարզ և հստակ:*

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22

23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Հրահանգ

Բաց առաջադրանքը պահանջում է տրված հարցի վերաբերյալ փաստարկված դատողություն: Ուշադիր կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Հաշվի առեք, որ ձեր պատասխանը պետք է լինի կոնկրետ և համապատասխանի հարցին: Պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով հատուկ հատկացված տեղում գրեք ձեր պատասխանը՝ դուրս չգալով առաջադրանքի համար հատկացված տարածքից:

Յուրաքանչյուր բաց առաջադրանքի երկայնքով նշված է առավելագույն միավորը:

Հաշվի առեք՝ բաց առաջադրանքի պատասխանի մեջ խտրական տերմին գործածելու դեպքում կկորցնեք մեկ միավոր:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 19

Առավելագույն միավորը՝ 3



«Ո՛չ կարողանում եմ խոսել, ո՛չ էլ քայլել: Կարճ ասած, անպիտանի մեկն եմ: Ձեռքերս փայտացած են, սակայն ինձ հաջողվում է սեղմել հեռուստացույցի հեռակառավարման վահանակի կոճակները և տեղաշարժել իմ անվասայլակը: Բանն այն է, որ ուղեղս հրաշալի է աշխատում, չափազանց սրամիտ եմ և ունեմ ֆոտոգրաֆիկ հիշողություն... Հազարավոր, միլիոնավոր բառեր միշտ պտտվել են իմ շուրջը... Իմ հասցեին կամ իմ մասին արտահայտված յուրաքանչյուր բառ յուրացնում էի, ամբարում, մտապահում: Ոչ մեկը բաց չեմ թողել... սակայն մտքումս միայն: Ես իմ ողջ կյանքի ընթացքում մի բառ անգամ չեմ ասել: Այնինչ շուտով տասնմեկ տարեկան եմ դառնում...»

«Իմ մտքից դուրս», Շերոն Մ. Դրեյպեր

– Նկարագրե՛ք ուսուցման համընդհանուր դիզայնի սկզբունքը, որը պետք է կիրառի ուսուցիչը նման իրավիճակում:
– Բացատրե՛ք, թե ինչու է կարևոր ուսուցման համընդհանուր դիզայնի կիրառումը ՀԿԿՈ աշակերտների արդյունավետ ուսուցման համար:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 20

Առավելագույն միավորը՝ 3

Ուսուցչի ինքնառեֆլեքսիան մասնագիտական աճի և զարգացման ամենակարևոր գործիքներից է, որն ապահովում է ուսուցման որակի բարելավումն ու աշակերտին հարմարեցված մոտեցումների ձևավորումը:

- Նկարագրե՛ք ուսուցչի ինքնառեֆլեքսիայի մեթոդներից մեկը:
- Բացատրե՛ք, թե ինչպես կնպաստի ձեր նկարագրած մեթոդի կիրառումը ուսուցչի մասնագիտական զարգացմանը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

Առաջադրանք N 21

Առավելագույն միավորը՝ 3

Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտն ունի վարքային խնդիրներ: Դասի ընթացքում նա պարբերաբար թեմային չվերաբերող բարձրաձայն մեկնաբանություններ է անում, ինչի հետևանքով խանգարվում է ուսուցչի անցկացրած դասը:

- Նկարագրե՛ք այն մոդելը, որը պետք է օգտագործի ուսուցիչը աշակերտի վարքի գործառույթը (ֆունկցիան) որոշելու համար:
- Հիմնավորե՛ք, թե ինչու է կարևոր որոշել վարքի ֆունկցիան աշակերտի վարքը կառավարելիս:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

Հրահանգ

Ընտրովի պատասխաններով առաջադրանքներին կից տրվում է չորս ենթադրական պատասխան, որոնցից միայն մեկն է ճիշտ: Առաջադրանքի էությունն ավելի լավ ըմբռնելու համար ուշադրություն դարձրեք հարցի ընդգծված, թավատառ արտահայտություններին:

Ընտրովի պատասխաններով առաջադրանքները գնահատվում են՝ մեկ միավոր:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 22

Հատուկ ուսուցչի նպատակն է ՀԿԿՈՒ աշակերտի հետ աշխատել ֆունկցիոնալ ընթերցանության հմտության զարգացման վրա:

Թվարկվածներից հատուկ ուսուցչի ո՞ր ակտիվությունն է **ամենից շատ** նպաստում ֆունկցիոնալ ընթերցանության հմտության զարգացմանը:

ա) Ուսուցիչը ՀԿԿՈՒ աշակերտին դասավանդելիս դեռ ցույց է տալիս տեսողականորեն գրված բառերը, ապա խնդրում է բարձրաձայն ընթերցել, որից հետո ծեփել կամ նկարել դրանք:

բ) Ուսուցիչը խաղի ընթացքում կիրառում է քարտեր, որոնց վրա պատկերված են համապատասխան գրառումներով և գներով մթերքներ: ՀԿԿՈՒ աշակերտը պետք է կարդա մթերքի անվանումը և ասի դրա գինը:

գ) Ուսուցիչն ՀԿԿՈՒ աշակերտի համար գրատախտակին գրում է պարզ բառեր, ապա խնդրում է նրան դեռ կազմել դրանք տառերով՝ ըստ նմուշի, այնուհետև գտնել տեքստում և բարձրաձայն կարդալ:

դ) Ուսուցիչն ՀԿԿՈՒ աշակերտին տրամադրում է դեռ նկարներ, ապա գրված բառեր և խնդրում համապատասխանեցնել դրանք ըստ գործառույթի, օրինակ. գրքին՝ կարդալը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 23

Ուշադրության կենտրոնացման հետ կապված դժվարություններ ունեցող աշակերտները ավելի լավ են սովորում, երբ դասը կառուցվածքային և կանխատեսելի է:

Ուսուցչի կողմից կիրառված ո՞ր ռազմավարությունը/ռազմավարությունները կօգնի/կօգնեն նշված խնդիրներն ունեցող ՀԿԿՈ աշակերտին արդյունավետորեն ներգրավվել ուսումնական գործընթացում:

I. Աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով ուսուցիչն անմիջապես դասի ընթացքում է ներկայացնում նյութը:

II. Աշակերտները նախապես գիտեն, թե ինչ սպասելիքներ ունի ուսուցիչը նրանցից ուսման և վարքի տեսանկյունից:

III. Ուսուցիչը նախապես բացատրում և տեղեկացնում է աշակերտներին, թե ինչին է վերաբերում ընթացիկ դասը:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 24

ՀԿԿՈ աշակերտը պատմության դասին դժվարանում է մտաբերել սովորած նյութը, մտապահել կարևոր տարեթվերն ու իրադարձությունները, ինչը խանգարում է ուսուցչին անցնել նոր թեմայի ուսուցմանը:

Թվարկվածներից ուսուցչի ո՞ր գործողությունն **ամենից շատ** կօգնի աշակերտին նկարագրված դժվարությունը հաղթահարելու հարցում:

ա) Ուսուցիչն աշակերտին յուրաքանչյուր իրադարձության հետ կապված մի քանի տարեթիվ է ներկայացնում և խնդրում է ընդգծել ճիշտ տարբերակը:

բ) Ուսուցիչն աշակերտի տետրում գրում է կարևոր տարեթվերը և պատասխանելիս տետրի մեջ նայելու իրավունք է տալիս:

գ) Ուսուցիչն աշակերտին հանձնարարում է ստեղծել կարևոր իրադարձությունների ժամանակագրական գիծը և խնդրում է փոխանցել պատմությունը հիմնվելով դրա վրա:

դ) Ուսուցիչն աշակերտին խնդրում է ժամանակագրական կարգով դասավորել քարտերի վրա գրված տարեթվերը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 25

Ուսուցիչը նկատել էր, որ դասարանի աշակերտներից մեկը ՀԿԿՈ աշակերտին հիշատակել է խտրական տերմինով:

Թվարկվածներից ո՞ր գործողությամբ **ամենից արդյունավետ** կերպով կարող է հաղթահարել ուսուցիչը նշված խնդիրը:

ա) Ուսուցիչը պետք է բացատրի ՀԿԿՈ աշակերտին, որ գերադասելի է չարձագանքել համադասարանցու ասածին, քանի որ երբ նա նման վարվելակերպով չի ստանա իր ցանկացած ուշադրությունը, հաջորդ անգամ չի կրկնի նման տերմիններ:

բ) Ուսուցիչը դասարանի առաջ պետք է դիտողություն անի աշակերտին, դասերի ավարտին հանձնարարի նրան կատարել որևէ օգտակար գործ և ներողություն խնդրել ՀԿԿՈ աշակերտից, որպեսզի մյուս աշակերտները ևս չգործածեն նման բառեր:

գ) Ուսուցիչը բոլոր աշակերտներին պետք է բացատրի իրենց համադասարանցու կողմից օգտագործված խտրական տերմինի նշանակությունը, նշելով, որ նման բառերով միմյանց հիշատակելն անընդունելի է:

դ) Ուսուցիչը պետք է անցկացնի ընդունելի և խտրական տերմինների վերաբերյալ քննարկում: Աշակերտներն իրենք պետք է հանգեն եզրակացության, թե ինչ հետևանքների կարող է հանգեցնել իրար նվաստացուցիչ բառերով կոչելը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 26

Հատուկ ուսուցիչը կարողություններն ու կարիքները գնահատելիս ՀԿԿՈ-ի աշակերտին հանձնարարեց դասակարգել օբյեկտները ոչ ակնառու հատկանիշների համաձայն:

Թվարկվածներից ո՞ր ունակությունը գնահատելու համար է կիրառել ուսուցիչը նկարագրված ակտիվությունը:

ա) Ուշադրության ծավալի

բ) Տրամաբանական մտածողության

գ) Կարճատև հիշողության

դ) Ընկալման ամբողջականության

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 27

Հատուկ ուսուցիչը նպատակ է դրել սովորեցնել ՀԿԿՈ աշակերտին տարվա եղանակները՝ կիրառելով մուլտիմոդալ մոտեցումը: Թվարկվածներից ո՞ր ակտիվությունն է համապատասխանում մուլտիմոդալ ուսուցման մեթոդին:

ա) Ուսուցիչը նկարագրել է տարվա յուրաքանչյուր եղանակը և աշակերտի հետ միասին պատրաստել է կոլաժներ:

բ) Ուսուցիչն աշակերտին ցույց է տվել տարվա եղանակները պատկերող քարտեր՝ համապատասխան գրառումներով:

գ) Ուսուցիչն աշակերտին հանձնարարել է նկարագրել տարվա եղանակներին բնորոշ առանձնահատկությունները:

դ) Ուսուցիչն աշակերտի համար բարձրաձայն ընթերցել է տարվա եղանակների մասին պատմվածք և դատողություններ արել նրա հետ միասին:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 28

ՀԿԿՈ աշակերտը սիրում է զբաղվել ծեփագործությամբ, սակայն երբ Արվեստի ուսուցիչը հանձնարարում է որևէ բան նկարել, նա հրաժարվում է կատարել առաջադրանքը:

Ո՞ր գործողությունը/գործողությունները կիրառելով կկարողանա ուսուցիչն ընդգրկել աշակերտին ընդհանուր դասարանային ակտիվությանը:

I. Ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտին հանձնարարում է պլաստիլինով պատել դասի թեմային համապատասխան ուրվագծային նկարները:
II. Ուսուցիչը խոստանում է ՀԿԿՈ աշակերտին, որ առաջադրանքը մատիտով կատարելուց հետո թույլ կտա նրան զբաղվել ծեփագործությամբ:
III. Ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտին հանձնարարում է ծեփել իր համար ցանկալի պատկերները, իսկ նրա համադասարանցիներին՝ ներկել ուսումնական թեմային համապատասխան նկարները:

ա) Միայն I, բ) Միայն I և II, գ) Միայն II և III, դ) Միայն III

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 29

ՀԿԿՈ աշակերտը վանդակավոր/տողանի տետրում գրելիս դժվարանում է պահպանել տարածական կողմնորոշումը:

Թվարկվածներից ուսուցչի ո՞ր ակտիվությունն **ամենից շատ** կօգնի աշակերտին հաղթահարել նկարագրված խնդիրը:

ա) Ուսուցիչն աշակերտի համար գրատախտակին գրում է բառեր և խնդրում է նրան արտագրել դրանք տետրում:

բ) Ուսուցիչն ուսուցման ընթացքում դիմում է ակոմոդացիային և գրավոր առաջադրանքը փոխարինում է բանավորով:

գ) Ուսուցիչը խնդրում է աշակերտին դուրս գրել միայն այն տառերը, որոնք գրվում են տետրի տողի վերևի մասում:

դ) Ուսուցիչն աշակերտի համար մեծացված վանդակներում մգեցնում է կողմնորոշիչ գծերը և սլաքներով նշում տառերի ուղղությունը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 30

ՀԿԿՈՒ աշակերտն ունի մտավոր (ինտելեկտուալ) զարգացման խանգարման միջին աստիճան և ուսուցման ընթացքում նրա համար անհրաժեշտ է մոդիֆիկացնել Ազգային ուսումնական պլանը:

Թվարկվածներից ո՞ր դրույթում է ներկայացված ԱՈՒՊ-ի մոդիֆիկացիան:

ա) Ուսուցիչը ՀԿԿՈՒ աշակերտի համար դասն անցկացնում է համաձայն ԱՈՒՊ-ի չափորոշչի և ուսումնական գործընթացում ակտիվորեն օգտագործում է օժանդակ միջոցներ:

բ) Ուսուցիչը կիրառում է ՀԿԿՈՒ աշակերտի գնահատման այլընտրանքային ձևերը, իսկ գրավոր հարցման փոխարեն կիրառում է բանավոր հարցման մեթոդը:

գ) Ուսուցիչն առաջադրանքները կատարելու համար ՀԿԿՈՒ աշակերտին հավելյալ ժամանակ է տրամադրում և անհատական դասեր է կազմակերպում ռեսուրս սենյակում:

դ) Ուսուցիչը նվազեցնում է ուսումնական պլանով նախատեսված ուսումնառության արդյունքների քանակը և պարզեցնում դրանք ՀԿԿՈՒ աշակերտի կարողություններին համապատասխան:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 31

Ծնողական ժողովին ուսուցիչն անդրադարձավ դասարանի ընդհանուր արդյունքներին իր առարկայից: Ժողովի ընթացքում աշակերտներից մեկի ծնողն ուսուցչին հարցրեց իր երեխայի ակադեմիական առաջադիմության մասին: Ուսուցիչը պատասխանեց. «Ձեր երեխան երևի կդժվարանա յուրացնել ծրագիրը: Դպրոցում մենք ունենք հատուկ ուսուցիչ և նախընտրելի է նրանից խնդրենք օգնություն»:

Ուսուցչի կողմից ծնողին տեղեկատվություն տրամադրելու այս ձևը մասնագիտական էթիկայի տեսանկյունից.

ա) **ճիշտ է,** քանի որ ուսուցիչը պատասխանում է ծնողի կողմից հղված հարցին՝ փորձելով օբյեկտիվորեն ցույց տալ նրան իր երեխայի կարողությունները:

բ) **ճիշտ չէ**, քանի որ երեխայի կարիքների մասին տեղեկատվությունն ուսուցիչը ծնողին պետք է տրամադրի անհատականորեն:

գ) **ճիշտ է,** քանի որ ուսուցիչը փորձում է ժամանակին զգուշացնել ծնողին իր երեխայի կարիքների և գոյություն ունեցող աջակցող ծառայությունների մասին:

դ) **ճիշտ չէ,** քանի որ ուսուցիչը պարտավոր է դեռ հատուկ ուսուցչի հետ վերստուգել իր ենթադրությունը և դրանից հետո միայն տեղեկացնել ծնողին:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 32

Մաթեմատիկայի ուսուցիչը գրատախտակին գրում է օրինակներ և լուծում դրանք: ՀԿԿՈ աշակերտը ուշադիր լսում է նրան, սակայն ելնելով նրանից, որ դժվարանում է ըմբռնել վերացական հասկացությունները, չի հասկանում, թե ինչի մասին է խոսում ուսուցիչը:

Թվարկվածներից ուսուցչի կողմից ընտրված ո՞ր ռազմավարությունն է արդյունավետ տվյալ դեպքում:

ա) Ուսուցիչը պետք է օգտագործի օժանդակ ռեսուրս՝ տալով ՀԿԿՈ աշակերտին կոնկրետ օբյեկտներով գործողություն կատարելու հնարավորություն և խնդրելով նրան լուծել օրինակները սմարթ գրատախտակի վրա:

բ) Ուսուցիչը պետք է կիրառի կրկնության ռազմավարությունը՝ ՀԿԿՈ աշակերտի համար բարձրաձայն կարդա գրատախտակի վրա գրված նյութը, որից հետո խնդրի նրան կրկնել և լուծել օրինակը:

գ) Ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտին պետք է վարժեցնի գրառումներ վարելու մեջ՝ խնդրելով տետրում նշել նրա համար անհասկանալի բոլոր տերմինները, որից հետո հարցնել ուսուցչին:

դ) Ուսուցիչը պետք է կիրառի մետաճանաչողական ռազմավարություն՝ առաջարկելով ՀԿԿՈ աշակերտին անձամբ բացահայտել, թե որտեղ է բախվում խնդիրների և հաղորդել ուսուցչին:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 33

ՀԿԿՈ աշակերտի ինտելեկտի մակարդակը դիտարկում են աշակերտի սովորելու ունակության դժվարությունների համաձայն:

Սովորելու ունակության խանգարում ունեցող ՀԿԿՈ աշակերտի դժվարությունների մասին արտահայտված ո՞ր դատողությունն/դատողություններն է/են ճիշտ:

I. Սովորելու ունակության խանգարում ունեցող աշակերտները, որպես կանոն, ունեն ինտելեկտի ցածր ցուցանիշ:

II. Ինտելեկտի ցուցանիշները ուղիղ համեմատական կապի մեջ են սովորելու ունակության խանգարման հետ:

III. Ինտելեկտի բարձր ցուցանիշները մշտապես չեն կարող ապահովել սովորելու ունակության անխափան աշխատանքը:

ա) Միայն I և II, բ) Միայն I և III, գ) Միայն II, դ) Միայն III:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 34

Դասարանում կա հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտ, որն ունի միայն տեղաշարժվելու սահմանափակում և օգտվում է անվասայլակից:

Թվարկվածներից ուսուցման ո՞ր ձևաչափն է համապատասխանում աշակերտի կարիքներին:

ա) Ուսուցումը պետք է անցկացվի ՀԿԿՈ աշակերտի համար մշակված այլընտրանքային ուսումնական նպատակների համապատասխան:

բ) Ուսուցումը պետք է անցկացվի ինտեգրված դասարանում ՀԿԿՈ աշակերտի համար կազմած մասնագիտացված ծրագրով:

գ) Ուսուցումը պետք է անցկացվի ռեսուրս սենյակում ՀԿԿՈ աշակերտի համար առարկայի և հատուկ ուսուցիչների օգնությամբ:

դ) Ուսուցումը պետք է անցկացվի դասարանում համադասարանցիների հետ՝ հաշվի առնելով ՀԿԿՈ աշակերտի համար ակոմոդացիայի համապատասխան ձևը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 35

Աշակերտն ունի լեզվի և խոսքի սեմանտիկ կողմի խնդիր:

Ո՞ր ակտիվությունն օգտագործելով **ամենից շատ** կօգնի ուսուցիչն աշակերտին նշված խնդիրը հաղթահարելու հարցում:

ա) Ուսուցիչը մանրակրկիտ բացատրում է աշակերտին սեմանտիկայի տարբեր կանոնները, թե որքանով կարևոր է դրանց իմացությունը պատմելու ժամանակ և խնդրում է նրան սովորել:

բ) Պատմելու ընթացքում ուսուցիչն աշակերտի ուշադրությունը սևեռում է սխալ արտաբերած բառերի և նախադասությունների վրա և ցույց է տալիս դրանք ճիշտ արտասանելու օրինակը:

գ) Ուսուցիչը բացատրում է աշակերտին, որ ելնելով համատեքստից երբեմն միևնույն բառն ունի տարբեր նշանակություններ և սովորեցնում է դրանք ճիշտ գործածել:

դ) Ուսուցիչն աշակերտի համար տպված տեքստը փոխարինում է սյուժետային քարտերով և խնդրում դասավորել քարտերը դրանց վրա պատկերված պատմության համապատասխան հաջորդականությամբ:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 36

Անհատական ուսումնական պլանը կազմելիս կարևոր է, որպեսզի ուսուցիչը սահմանի ՀԿԿՈՒ աշակերտին համապատասխանող ուսումնական նպատակը:

Թվարկվածներից ո՞ր ակտիվությունը կօգնի ուսուցչին ընտրել այս աշակերտի համար համապատասխան նպատակը:

ա) Ուսուցիչը պետք է բացահայտի աշակերտի ընդհանուր հետաքրքրությունները և դրանց հիման վրա սահմանի ուսումնական նպատակ:

բ) Ուսուցիչը առարկայական ծրագրի հիման վրա պետք է ընտրի միջին բարդությանը համապատասխան արդյունք և դրա համաձայն սահմանի ուսումնական նպատակ:

գ) Ուսուցիչը պետք է հաշվի առնի մյուս առարկաների ուսուցիչների փորձը և նրանց խորհուրդների նախատեսմամբ սահմանի ուսումնական նպատակ:

դ) Ուսուցիչը պետք է գնահատի աշակերտի գիտելիքների ակտուալ մակարդակը առարկայական ծրագրից և դրա հիման վրա սահմանի ուսումնական նպատակ:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Հրահանգ

Բաց առաջադրանքը պահանջում է տրված հարցի վերաբերյալ փաստարկված դատողություն: Ուշադիր կարդացեք առաջադրանքի պայմանը և հարցը: Հաշվի առեք, որ ձեր պատասխանը պետք է լինի կոնկրետ և համապատասխանի հարցին: Պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով հատուկ հատկացված տեղում գրեք ձեր պատասխանը՝ դուրս չգալով առաջադրանքի համար հատկացված տարածքից:

Յուրաքանչյուր բաց առաջադրանքի երկայնքով նշված է առավելագույն միավորը:

Հաշվի առեք՝ բաց առաջադրանքի պատասխանի մեջ խտրական տերմին գործածելու դեպքում կկորցնեք մեկ միավոր:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 37

Առավելագույն միավորը՝ 3

«Մենք վախենում ենք, երբ մեզ որևէ մեկը գրկում է: Ես ինքս տառապում եմ աուտիզմով և ես նույնպես ուզում եմ զգալ գրկախառնությունը, այդ իսկ պատճառով ինքնախթանման նպատակով հաճախ պտտվում եմ, թավալվում, օրորվում եմ աթոռին և ծափահարում»:

(Ըստ «Թեմփլ Գրանդինի» կենսագրական ֆիլմի,

ռեժ. Միկ Ջեկսոն, 2010 թ.)

- Նկարագրե՛ք այն ռազմավարությունը, որը պետք է ընտրի ուսուցիչը ՀԿԿՈ աշակերտի կողմից դասին կարծրատիպային վարքագիծ դրսևորելու դեպքում:
- Հիմնավորե՛ք ձեր նկարագրած ռազմավարության արդյունավետությունը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 38

Առավելագույն միավորը՝ 3

Տեսողության խանգարման մասին արտահայտված որոշ պնդումներ առասպել են, ինչի հետևանքով նման խնդիրներով աշակերտների հետ աշխատելիս դժվար է ընտրել ճիշտ ռազմավարություն:

Ստորև ներկայացնում ենք տեսողության խանգարման մասին արտահայտված պնդումներ:

1. Տեսողության խանգարում ունեցող երեխայի հաճախակի ընդգրկումը վիզուալ ակտիվություններում կարող է հանգեցնել տեսողության առավել վատթարացման և հետևաբար՝ մնացորդային տեսողության կորստի:
2. Տեսողության խանգարում ունեցող երեխաների մոտ հասկացությունները ձևակերպելու գործընթացն ընթանում է դանդաղ, այդ գործընթացին բնորոշ է հատվածայնությունը և ընդհանրացնելու դժվարությունը:

– Ներկայացված պնդումներից ընտրե՛ք իրականությունն արտացոլող ճիշտ պնդումը և նկարագրե՛ք այն ռազմավարությունը, որը կօգնի հաղթահարել դրանում փոխանցված խնդիրը:

– Հիմնավորե՛ք ձեր նկարագրած ռազմավարության արդյունավետությունը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Առաջադրանք N 39

Առավելագույն միավորը՝ 3

Հատուկ կրթական կարիքներ ունեցող աշակերտն ունի սովորելու ունակության խանգարում: Դասին գրավոր աշխատանք կատարելիս նա հաճախ սխալներ է թույլ տալիս, ինչի պատճառով շատ է հուզվում. «չեմ կարող», «վատ եմ գրում», «ինչ անեմ, չի ստացվում»: Նրա վրա առանձնապես ցավոտ է ազդում, երբ համեմատում է իր և համադասարանցիների աշխատանքները: Նման դեպքում նա ընդհանրապես հրաժարվում է կատարել առաջադրանքը:

- Նկարագրե՛ք ուսուցչի գործողությունը, որը կօգնի տվյալ խնդիրներով ՀԿԿՈ աշակերտին դասապրոցեսում ընդգրկվելու հարցում:
- Հիմնավորե՛ք ձեր ընտրած ռազմավարության արդյունավետությունը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով:

Առաջադրանք N 40

* Առաջադրանքի շարունակությունը տե՛ս հաջորդ էջում

Առավելագույն միավորը՝ 3

Ներկայացնում ենք հատված ՀԿԿՈ աշակերտի Անհատական ուսումնական պլանից.

Աշակերտի ակադեմիական և կոգնիտիվ հմտությունների նկարագիր

Ճանաչողական ոլորտ	Ուժեղ կողմեր	Կարիքներ
Մտածողություն	• Աշակերտը ճիշտ հաջորդականությամբ կարող է դասավորել առօրյա ռեժիմն արտացոլող 3-4 սյուժետային քարտերը:	• Աշակերտը դժվարանում է հասկանալ ամենօրյա կենսական իրավիճակների հետ կապված պատճառահետևանքային կապերը:

1 1a 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15 16 17 18 19 20 21 22
23 24 25 26 27 28 29 30 31 32 33 34 35 36 37 38 39 40 40a

Ստորև ներկայացված ցուցումների պատասխանները գրեք աշակերտի ուժեղ կողմերի և կարիքների նախատեսմամբ:

- Նկարագրե՛ք այն ակտիվությունը, որը կօգնի ՀԿԿՈ աշակերտին մտածողության զարգացման հարցում:
- Հիմնավորե՛ք ձեր նկարագրած ակտիվության արդյունավետությունը:

Պատասխանը գրեք պատասխանների թերթիկի վրա առաջադրանքի համապատասխան համարի երկայնքով: